Բնական աշխարհը

2

ՄԱՍ 1

ԴԱՍԱՐԱՆ

Գ. Հովհաննիսյան,
Փ. Դավթյան
Մ. Ղուկասյան

2
ԴԱՍԱՐԱՆ

ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ

ՄԱՍ 1

«Աստղիկ Գրատուն
հրատարակչություն
Երևան 2023

ՀՏԴ 373.3:502/504(075.3)
ԳՄԴ 20.1գ72
Հ 854

Երաշխավորված է ՀՀ կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարարության կողմից

Հովհաննիսյան Գ.
Հ 854 **Ես և շրջակա աշխարհը**: Հանրակրթական դպրոցի 2-րդ դասարանի դասագիրք / Գ. Հովհաննիսյան, Փ. Դավթյան, Մ. Ղուկասյան.- Եր.: Աստղիկ Գրատուն, 2023.
Մաս 1.- 80 էջ:

ՀՏԴ 373.3:502/504(075.3)
ԳՄԴ 20.1գ72

ISBN 978-9939-74-139-0

© «Աստղիկ Գրատուն» հրատարակչություն, 2023
© Հովհաննիսյան Գ., 2023
© Դավթյան Փ., 2023
© Ղուկասյան Մ., 2023
© ԿԳՄՍՆ, 2023

Ի՞ՆՉ Է ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ

Սիրելի աշակերտ.

Դու սկսում ես անցնել նոր առարկա «Ես և շրջակա աշխարհը». այն ձեզ կծանոթացնի շրջապատող աշխարհին:

Մեր դասագիրքը ձեզ օգնական է ամենուրեք: Ուշադիր դիտի՛ր նկարները և կատարի՛ր առաջադրանքները: Դրանք կօգնեն ձեզ իմանալ շատ ու շատ նոր ու հետաքրքիր, զարմանահրաշ բաներ: Միմանաս ու կհասկանաս, որ աշխարհը, որտեղ դու ապրում ես, իսկապես հիասքանչ է:

Յանկանում ենք ձեզ հաջողություններ:

Հեղինակներ

1 Ի՞ՆՉ Է ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ

Ինչպե՞ս ես պատկերացնում աշխարհը: Նայի՛ր շուրջդ: Ի՞նչ ես տեսնում դասարանում, փողոցում, տանը:

Շրջակա աշխարհին այն ամենն է, ինչ գտնվում է մեր շուրջը՝ բնությունը, մարդիկ և այն ամեն ինչ ստեղծել է մարդը:

Բնությունն այն է, ինչ գտնվում է մեր շուրջը, բայց չի ստեղծվել մարդու կողմից, օրինակ՝ լեռները, ծառերը, ջուրը, աստղերը, թռչունները:

Մեր աչքերը, ականջները, քիթը, լեզուն, մաշկը օգնում են մեզ ճանաչելու մեր շրջակա աշխարհը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

1. Նկարում ճի՞շտ է կազմված բնության առարկաների շարքը: Կազմի՛ր քո շարքը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

2. Սրանով ✓ նշի՛ր այն առարկաները, որոնք ստեղծվել են մարդու կողմից:

3. Սրանով ⊕ նշի՛ր այն առարկաները, որոնք չեն ստեղծվել մարդու կողմից:

4. Կարդացե՛ք բանաստեղծությունը: Դո՛ւրս գրեք բնության առարկաները, օրինակ՝ արև:

ԿԱՆԱՆՉ ԱԽՊԵՐ

Է՛յ կանանչ ախպեր,
Է՛յ ճանանչ ախպեր,
Արի՛, քեզ հետ բե՛ր
Արևի շողեր.
Բե՛ր անուշահոտ
Ծիլ, ծաղիկ ու խոտ,
Կարկաչուն վըտակ,
Երկինք կապուտակ,
Խատուտիկ հավքեր,
Զրընգան երգեր,
Գառների մայուն,
Խաղ, ուրախություն.
Է՛յ կանանչ ախպեր,
Է՛յ ճանանչ ախպեր:

Հ. Թումանյան

ԹԵՄԱ 1 ՈՎ ԵՄ ԵՍ



Աշխարհում ապրում են շատ-շատ մարդիկ: Նրանք միմյանցից տարբերվում են իրենց տարիքով, մազերի ու աչքերի գույնով, արտաքին տեսքով, նրանք պատկանում են տարբեր ազգերի, խոսում են տարբեր լեզուներով: Նրանք բոլորն էլ անկրկնելի են:

Աշխարհի այդ բազմաթիվ մարդկանցից մեկն էլ դու ես:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

1. Դու ինչո՞վ ես նման, և ինչո՞վ ես տարբերվում մյուս մարդկանցից:

2. Նկարագրե՛ք ինքներդ ձեզ՝ լրացնելով թերթիկը:

Իմ անունը _____ է:
Ես ծնվել եմ _____ ամսվա _____ -ին:
Ես երազում եմ դառնալ _____
Ես սիրում եմ խաղալ _____
Ես սիրում եմ կարդալ _____
Իմ սիրած հեքիաթն է _____
Իմ սիրած զբաղմունքը կամ զբաղմունքները _____
_____
Իմ սիրած գույնն է _____
Իմ սիրած միրգն է _____
Իմ սիրած մուլտհերոսն է _____
Իմ սիրած մարզաձևն է _____

ՔՆՆԱՐԿՈՒՄ

3. Թերթիկը լրացնելուց հետո 2-3 ընկերներով քննարկեք:

ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

4. Կատարե՛ք եզրակացություններ. ավելի շատ նմանություննե՞ր ունեք՝ թե՞ տարբերություններ: Դասարանցիներով կազմե՛ք խմբեր ըստ լրացրած թերթիկների բովանդակության, օրինակ՝ նույն խումբն են կազմում նրանք, ում սիրած միրգը ծիրանն է:

Գիտե՞ք, որ

Հայաստանում ապրող ազգերի ներկայացուցիչներ՝ հայեր, ուկրաինացիներ, ռուսներ, վրացիներ, քրդեր, հրեաներ, հույներ, ասորիներ, եզդիներ

5. Կարդա՛ և մեկնաբանի՛ր.

Ասա՝ ով է ընկերդ, ասեմ՝ ով ես դու:

ԴԵՐՁԱԿԸ

Ասեղ է առել,
Կարում, արդուկում,
Դերձակ է դառել
Սուրիկը բակում:
Քույրիկն է գալիս՝
Անունը Թամար.
-Մի մուշտակ կարիր
Արջուկիս համար:
-Ահա ձեզ կատա՛կ,
Մուշտակ՝ արջուկի՞ն,
Չէ՞ որ նա մուշտակ
Ունի իր հագին:
-Տիկնիկիս համար
Շոր կարիր կարգին:
-Այդ մասին, Թամար,
Դիմի՛ր մայրիկին:



Գ. Սարյան

ՀԱՐՑԵՐ

- Դու ինչ ե՞ս ուզում դառնալ: Ինչո՞ւ:
- Ի՞նչ հավաքածուներ ունեք: Պատմե՛ք դրանց մասին:

ՊԱՏՄԵԼ, ՀՈՐԻՆԵԼ

6. Պատմե՛ք՝ ինչո՞վ եք զբաղվում դասերից հետո:

- Հորինե՛ք պատմվածք՝ «Իմ ընկերը» վերնագրով:

2 ՄԵՐ ՀՈՒՅԶԵՐԸ

ՀԱՐՑԵՐ

- Ի՞նչ տրամադրությամբ ես այսօր դպրոց եկել:
- Ինչպե՞ս կվարվես, եթե փչանա տրամադրությունդ:

Ընկալելով շրջակա միջավայրը՝ մարդը որոշակի վերաբերմունք է ցուցաբերում շրջապատի նկատմամբ: Նա կարող է ուրախանալ, հիանալ, տխրել, տառապել, զայրանալ, սիրել, վախենալ: Երբ քո տրամադրությունը բարձր է, դու ուրախանում ես արևոտ օրով, բարեկամների հետ հանդիպումից, շրջապատին ասում ես բարի խոսքեր: Իսկ երբ ինչ-որ մեկը քեզ ասում է կոպիտ, վիրավորական բառեր, քո տրամադրությունն ընկնում է, դու զայրանում ես, չես գնում խաղալու ընկերների հետ:





- Երեխաների դեմք գծիկով միացրու՛ համապատասխան բառերին:
- Կռահե՛ք, թե ինչը կարող էր դրանց պատճառ լինել:

- Լրացրե՛ք միտքը.

Ես ուրախանում եմ, երբ ...
Ես տխրում եմ, երբ ...
Ես ամաչում եմ, երբ ...
Ես զարմանում եմ, երբ ...
Ես հպարտանում եմ, երբ ...
Ես բարկանում եմ, երբ ...

Հաճախ մարդիկ հաղորդակցվում են նաև շարժումներով, այսինքն՝ հաղորդակցվում են առանց բառերի:

- Կռահե՛ք, թե ինչ կարող են նշանակել նկարում պատկերված երեխաների շարժուձևերը:

Լսողության և խոսքի խանգարում ունեցող մարդիկ՝ խուլ ու համրերը, հաղորդակցման համար օգտվում են շարժուձևերի լեզվից: Նման մարդիկ հատուկ ուշադրության և հոգատարության կարիք ունեն:

ՀԱՐՑԵՐ

- Ի՞նչ եք կարծում՝ ինչպիսի՞:



Գիտե՞ք, որ

Սա հայերեն շարժուձևերի այբուբենն է:



Գոյություն ունի բեմարվեստի մի տեսակ՝ **մնջախաղ**, որտեղ կերպարները ստեղծվում են դիմախաղով և շարժուձևերով ու ժեստերով:

Մնջախաղի մեծ վարպետ էր կրկեսի հայ մեծանուն դերասան Լեոնիդ Ենգիբարյանը:

Գիտե՞ք, որ

ԽԱՂԱՑԵ՛Ք ՄՆՋԱԽԱՂ

Խաղացողը շարժուձևերով և/կամ դեմքի արտահայտությամբ ցուցադրում է ինչ-որ բան: Ընկերները փորձում են կռահել ցուցադրածը: Ում հաջողվում է կռահել, հաջորդը ներկայացնում է ինքը:

Բացատրե՛ք «Լավ խոսքը կբարձրացնի դիմացինի տրամադրությունը» արտահայտության նշանակությունը:

ՀԱՐՑԵՐ



- Ի՞նչ մասնագիտություն ունեն նկարում պատկերված մարդիկ:

- Վերնագրի՛ր նկարները

- Դեմքի արտահայտությամբ կամ ժեստերով ցույց տվե՛ք, թե ինչ եք զգում, երբ
  - ✓ զարմացել ես՝ տեսնելով կրկեսային բարդ համարը,
  - ✓ քո եղբայրն ընկել է և լաց է լինում,
  - ✓ վախեցել ես շնից,
  - ✓ հայրիկը արգելել է հեռուստացույց դիտել, որովհետև դասերդ չես կատարել,
  - ✓ նվեր ես ստացել քո սիրելի գիրքը:

- Հիշե՛ք, որ օգտակար է հաճախակի դրսևորել դրական հույզեր:
- Բացասական հույզերը պետք է ձգտել զսպել, որ չտխրես և չնեղացնես ուրիշներին:
- Պետք է միշտ ուշադիր լինել շրջապատի մարդկանց հոգեվիճակին, ապրումակցել, աջակցել նրանց դժվար պահերին:

ՊԱՏՄԵԼ

Պատմե՛ք, թե ինչ եք զգում ձեր սիրելի երգերը լսելուց հետո:

Յուրաքանչյուր մարդու կյանքը սկսվում է ծնվելուց: Ժամանակի ընթացքում նա փոխվում է: Նորածին երեխան ոչինչ անել չի կարող և մշտական հոգատարության կարիք ունի: Նա արագորեն մեծանում և ճանաչում է շրջակա աշխարհը:

Դու արդեն 7 տարեկան ես, սովորում ես երկրորդ դասարանում և արդեն շատ բան գիտես, շատ բան կարող ես անել: Կանցնի ժամանակ և դու կդառնաս չափահաս: Մարդը համարվում է չափահաս, երբ դառնում է 18 տարեկան: Դրանից հետո դու կընտրես մասնագիտություն: Կարևոր է ընտրել այնպիսի մասնագիտություն, որը քո սրտով լինի:

Մեծահասակ մարդիկ աշխատում են: Նրանք հոգ են տանում այլ մարդկանց և շրջակա աշխարհի մասին:

Շրջակա աշխարհը նույնպես փոփոխվում է: Փոխվում են բնությունը, գյուղերն ու քաղաքները:



ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ ես հիշում քո վաղ մանկությունից,
   երբ ավելի փոքր էիր:
2. Այդ տարիների ինչպիսի՞ իրեր են պահպանվել տանը:
3. Հետաքրքրաշարժ ինչպիսի՞ դեպքեր ես հիշում:
4. Ծնողներից հարցրու՛ քո կյանքի այդ տարիների մասին:

ՀԱՐՑԵՐ

1. Նկարի ո՞ր մասում է պատկերված մեր կյանքի անցյալը,
   որու՞մ՝ ներկան և որու՞մ ապագան:
2. Ի՞նչ նշաններ այդ մասին հուշեցին քեզ:



ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ մասնագիտություն ունեն նկարում պատկերված մարդիկ: Նկարները գծիկով միացրու՛ մասնագիտության հետ:







ՆԿԱՐԻՉ

ԲԺԻՇԿ

ՔԻՄԻԿՈՍ

ՈՒՍՈՒՑԻՉ

ԴԻՐԻԺՈՐ

ԾՐԱԳՐԱՎՈՐՈՂ

ԵՐԱԺԻՇՏ

ՌԱԶՄԻԿ

2. Ի՞նչ զբաղմունք՝ հորբի ունես դու:
3. Ի՞նչ ես երազում դառնալ: Ինչու՞ հենց դա:
4. Ի՞նչ գիտես քո ապագա մասնագիտության մասին:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

5. Կարդա՛ և մեկնաբանի՛ր

Աշխարհն աշխատավորինն է:
Գործը վաղվան մտաց, իմացի՛ր՝ կորավ, գնաց:
Ժամանակը ոսկի է:

ՀԱՆԵԼՈՒԿ

Ինքը չի ուտում,
Ինքը չի խմում,
Բայց իր տիրոջը,
Միշտ կուշտ է պահում:

ՏՈԳԶՅՈ



Երբ ես փոքր էի,
Տատս ինձ համար,
Հեքիաթ էր պատմում,
Որ քունս տանի:
Հիմա էլ ես եմ,
Տատիկիս համար,
Հեքիաթներ պատմում,
Որ շուտ չքնի:
Արդեն մեծ եմ ես, գիտե՞ք,
Էլ ինձ փոքրիկ չկարծե՛ք:
Ոտքիս ծայրին թե կանգնեմ,
Մեծ սեղանին կհասնեմ:

Մկրտիչ Կորյուն

- ✓ Անցյալն այն է, ինչն արդեն եղել, անցել է:
- ✓ Ներկան՝ հիմա է:
- ✓ Ապագան՝ դեռ նոր է լինելու:

ՏՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Նկարե՛ք ձեր երևակայած ապագայի քաղաքը կամ գյուղը:

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Պատրաստե՛ք պատմություններ ձեր ծնողների, հարզատների կամ ծանոթների մասնագիտությունների մասին:

Աշխատե՛ք, որքան կարելի է, շատ բան իմանալ այն մասին, թե

- ✓ ինչու՞ են նրանք ընտրել դրանք,
- ✓ ինչպե՞ս են նրանք հասել դրանց:

Պատմությունները գրի առե՛ք ինքնուրույն կամ մեծերի օգնությամբ: Պատմությունները կարելի է լրացնել ընտանեկան լուսանկարչական ալբոմից վերցրած լուսանկարներով:

Դասարանում քննարկե՛ք, թե որքան բազմազան են մեր հարազատների ու ծանոթների մասնագիտությունները:

Բոլոր պատմությունները կարելի է հավաքել մեկ տեղում, դարձնել գիրք ու վերնագրել:

4 ՔՈ ՕՐՎԱ ՌԵԺԻՄԸ

- Ինչպե՞ս է սկսվում քո օրը: Համառոտ նկարագրի՛ր:
- Ի՞նչ ես սովորաբար անում ցերեկը և երեկոյան:

Դուք անպայման լսել եք օրվա ռեժիմի մասին: Երբ ասում են օրվա ռեժիմ, նկատի ունեն օրվա պլանավորում, այսինքն՝ օրվա ընթացքում խելացի զուգակցել ուսումը, խաղերը, հանգիստը, քունը և այլ զբաղմունքներ:

Օրվա ռեժիմին հետևելն օգտակար է: Գրագետ կազմված օրվա ռեժիմն օգնում է հասցնել կատարել բոլոր գործերը և պահպանել առողջությունը:

Օրվա ռեժիմը տարբեր է աշխատանքային և հանգստյան օրերին:

Այն դպրոցականները, ովքեր իրենց ազատ ժամանակն ամբողջությամբ անցկացնում են հեռուստացույցի և համակարգչի առջև, ճիշտ չեն վարվում:

Իմացե՛ք ավելին

Ռեժիմ բառը նշանակում է՝ «կառավարում, ղեկավարում»:

Ռեժիմ բառի հոմանիշներն են «ապրելակերպ»-ը և «կենսակերպ»-ը:

ՀԱՐՑԵՐ

- Ի՞նչ է առավոտը: Ինչպե՞ս ես իմանում, որ առավոտ է:
- Ի՞նչ է ցերեկը: Սովորաբար ի՞նչ ես անում ցերեկը:
- Ի՞նչ է երեկոն: Ո՞րն է քո սիրած զբաղմունքը երեկոյան:
- Ի՞նչ է գիշերը: Ե՞րբ է վրա հասնում այն:
- Սովորաբար ի՞նչ են անում մարդիկ գիշերը:

- Քննարկե՛ք, վերլուծե՛ք ձեր հասակակցի օրվա ռեժիմը.

7:00
Վերկաց, անկողնու հարդարում,
մարմնամարզություն

7:20
Լվացվել,
մաքրել ատամները

7:30
Նախաճաշ

8:20
Գնալ դպրոց

8:30-12:30
Դասեր դպրոցում

12:30
Վերադարձ
դպրոցից

13:00
Ճաշ

13:30-15:00
Զբոսանք մաքուր օդում,
բակային շարժական խաղեր

15:00-17:00

Դասերի պատրաստում

17:00-18:30

Սպորտային կամ երաժշտական խմբակ

18:45-19:30

Տնային գործեր

19:30

Ընթրիք

20:00-21:00

Ազատ ժամանակ

21:15

Նախապատրաստվել քնելուն

Մաքրել ատամները

21:30-7:00

Քուն

- Շաբաթվա օրերն ունեն իրենց անունները.
- Շաբաթվա ո՞ր օրն է այսօր: Իսկ վա՞ղը, երե՞կ, վաղը չէ մյուս օ՞րը:

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ

ՈՒՐԲԱԹ

ՇԱԲԱԹ

ԿԻՐԱԿԻ

ՏՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

- Ինքնուրույն կամ մեծերի օգնությամբ կազմե՛ք ձեր օրվա ռեժիմը:
- Ձեր կազմած օրվա ռեժիմը ներկայացրե՛ք նկարների տեսքով.

ԱՌԱՁԱԴՐԱՆՔ

- Կազմի՛ր հանգստյան օրվա քո ռեժիմը:
- Նկարագրի՛ր քո հանգստյան օրը:
- Ինչո՞վ է տարբերվում այն աշխատանքային օրերի ռեժիմից:
- Ընկերներով քննարկե՛ք հանգստյան օրերի ռեժիմը:

5 ՄԵՐ ՄԱՐՄԻՆԸ

ՀԱՐՑԵՐ

- Մեծ հայելու մեջ նայի՛ր քեզ:

Քո մարմնի ո՞ր մասերը գիտես:

Մեր մարմինն ունի իր յուրահատկությունը: Այն, ինչ մենք տեսնում ենք արտաքինից, դրանք մեր մարմնի արտաքին մասերն են:

Մարդու մարմնի կարևորագույն մասերն են գլուխը, պարանոցը, իրանը: Ձեռքերը և ոտքերը մարդու վերջույթներն են:

Մեր մարմնի բոլոր մասերը գործում են փոխադարձորեն համաձայնեցված:

ՀԱՐՑԵՐ

- Մակագրի՛ր մարմնի մասերը:



- Մարմի՛ն ուրիշ ի՞նչ մասեր գիտես, որ չմակագրեցիր, օրինակ՝ գլխի վրա:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

- Ընկերներով քննարկե՛ք և պատասխանեք հետևյալ հարցերին
  - Ինչի՞ համար է գլուխը:
  - Ինչի՞ համար են ձեռքերը:
  - Ինչի՞ համար են ոտքերը:
  - Ինչի՞ համար է պարանոցը:
  - Ինչի՞ համար է իրանը:

Կեցվածքը հանգստի և շարժման ժամանակ մարմինը որոշակի դիրքում պահելու մարդու սովորությունն է: Ճիշտ կեցվածք ունեցող մարդը գեղեցիկ է, բարեկազմ, բարձր պահած գլխով: Սխալ կեցվածքի դեպքում, ընդհակառակը, մեջքը կորացած է, ուսերը կախված են: Գեղեցիկ չէ: Բացի այդ, նման մարդկանց սիրտը դժվարությամբ է աշխատում:

- Կռահե՛ք, թե ում կեցվածքն է ճիշտ, իսկ ո՞ւմը՝ սխալ:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

- Ընկերներով քննարկե՛ք նկարները:

ՃԻՇՏ Է ԱՍԵԼ

- անվասայլակով տեղաշարժվող մարդ
- երեխա, ով կույր է
- հաշմանդամություն ունեցող անձ

ՍԽԱԼ Է ԱՍԵԼ

- անվասայլակին գամված մարդ
- կույր երեխա
- հատուկ կարիքներ ունեցող

Իմացե՛ք ավելին

- Աշխարհում հաշմանդամություն ունի յուրաքանչյուր 10 երեխայից մեկը:

- Մտածե՛ք՝ ինչպես կարող եք օգտակար լինել հաշմանդամություն ունեցող անձանց:

- Հորինե՛ք պատմություն նկարի վերաբերյալ:

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Իրար նման երկու քույր,
Իսկ մեջտեղը մի բլուր,
Եթե գիտես դու նրանց,
Անունները իսկո՛ւյն տուր:

ՁԿԱ՝ ԱՉՔԸ

Ամեն մարդ ունի
Մի փոքրիկ տնակ,
Մեջը սիրունիկ
Գառներ սպիտակ:

ԱՉՔԱՈՏՈ՝ ՊՈՒՉՔ

Մարդը միշտ ունի
Տասը օգնական
Ամեն մի զույգը
Իրար է նման:

ԱՉԳՏՈՒՈ ՎԱՀՍԳԸ

Մտքերի, խոհի մառանն է նա,
Ի՞նչ է, գուշակիր անունը նրա,
Վերևում ունի մանրիկ խիտ անտառ՝
Ներևում՝ խոսքեր, ծաղկող բան ու բառ:

ՈՒԻՍՆԵ

ԴԱՍ 6

ԻՆՉՊԵ՞Ս ԵՆՔ ՃԱՆԱՉՈՒՄ ԱՇԽԱՐՀԸ

Մարդը շրջակա աշխարհը ճանաչում է առաջին հերթին զգայարանների օգնությամբ:

Աչքերը, ականջները, քիթը, լեզուն, մաշկը մեր զգայարաններն են: Օրինակ՝ հոտի միջոցով տարբերում ենք փչացած մթերքը, չենք ուտում այն, դրանով խուսափում ենք թունավորումից:

ԱՌԱՁԱԴՐԱՆՔ

- Զգայարանները գծիկով միացրե՛ք համապատասխան առարկաներին:

- Ընկերներով քննարկե՛ք և պատասխանե՛ք հետևյալ հարցերին.

- ✓ Ինչի՞ համար է քիթը:
- ✓ Ինչի՞ համար են ականջները:
- ✓ Ինչի՞ համար է լեզուն:
- ✓ Ինչի՞ համար են աչքերը:
- ✓ Ինչի՞ համար են մատները:

- Ի՞նչ համ ունի լիմոնը: Ի՞նչ գույն ունի այն: Ինչպիսի՞ն է նրա մակերևույթը:
- Ո՞ր զգայարաններն օգնեցին քեզ իմանալ դրանք:
- Խաղացե՛ք «Գուշակի՛ր նկարագրությամբ» խաղը:
- Անվանե՛ք իրավիճակներ, որոնց ժամանակ զգայարանները (լսողություն, հոտառություն, տեսողություն, համ) մարդուն զգուշացնում են վտանգի մասին:

ԱՌԱՁԱԴՐԱՆՔ

- Շարունակե՛ք միտքը.

Տեսնել ...
Լսել ...
Շոշափելով զգալ ...
Զգալ ... համը

ՀԱՆԵԼՈՒԿ

Չայներ են որսում
Իրարից զատ-զատ,
Բայց ամփոփելիս
Դառնում հարազատ:

ԺՂՂԵՂՈՒՀՈ

- Պարկերում լցված են ալյուր, շաքարավազ, աղ: Դրանք բոլորն ունեն սպիտակ գույն: Ինչպե՞ս կարելի է պարզել, թե որ պարկում ինչն է գտնվում: Ո՞ր զգայարանը քեզ կօգնի այդ հարցում:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

- Կարդա՛ և մեկնաբանի՛ր

✓ *Աչքի տեսածը հաստատ է, քան ականջի լսածը:*
✓ *Ականջի հետև գցել:*
✓ *Աչք ու ականջ դառնալ:*
✓ *Գործը գլուխ բերել:*

Օրինակ՝ **Ականջի հետև գցել**, նշանակում է անտարբերության մատնել:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

- Զբոսնի՛ր քո մոտակա այգում կամ անտառում: Նկարագրի՛ր դրանց կյանքը քո զգայարանների օգնությամբ:

- Ընկերներով պարզե՛ք, թե ինչ հաշմանդամություն ունեն նկարում պատկերվածները: Երկու խմբով հորինե՛ք փոքրիկ պատմություն նրանց մասին:

ՀՈՐԻՆՈՒԿ - ՀԱՆԵԼՈՒԿ

- Հորինե՛ք հանելուկներ ձեր զգայարանների վերաբերյալ:

7

ՀԻԳԻԵՆԱ. ՄԱՔՈՒՐ ԿԵՆՑԱՂ.

ՀԱՐՑԵՐ

- Հիշե՛ք ձեր զգայարանները:
  Ի՞նչ դեր են խաղում դրանք ձեր կյանքում:
- Դուք շարունակու՞մ եք հետևել օրվա ռեժիմին:

Մարդիկ ասում են. «Մեր առողջությունը մեր ձեռքերում է»: Իսկ ի՞նչ է դա նշանակում: Մշտապես մենք ձեռքերով դիպչում ենք տարբեր իրերի: Մեր ձեռքերը կեղտոտվում են, ու եթե չլվանանք ձեռքերը ինչպես հարկն է, ապա դա կարող է բերել ծանր հիվանդության, և ստիպված կլինենք բուժվել հիվանդանոցում: Ձեռքերը լվանալով օճառով՝ կարևոր է համոզվել, որ եղունգների տակ նույնպես մաքուր է: Չէ որ այնտեղ ամենից շատ հիվանդածին մանրէներ կան: Այդ պատճառով էլ ոչ մի դեպքում չի կարելի կրծել եղունգները:

Բժիշկները գտնում են, որ հիվանդությունն ավելի հեշտ է կանխել, քան բուժել:

ՀԱՐՑԵՐ

- Նայե՛ք նկարները:
  Պատմե՛ք դրանցից յուրաքանչյուրի նշանակության մասին:

- Հիգիենայի ուրիշ ի՞նչ միջոցներից եք օգտվում:

- Ընկերներով քննարկե՛ք՝ ինչի համար են հիգիենայի պարագաները:
- Ի՞նչ կլիներ, եթե չլինեին հիգիենայի պարագաները:

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

դիտե՛ք «Փնթի տղան» տեսանյութը և քննարկե՛ք ընկերներով:

ՀԱՐՑԵՐ

- Պատմե՛ք նկարների մասին:
- Ո՞ր սենյակը ձեզ դուր եկավ: Ինչո՞ւ:
- Ինչպիսի՞ն է քո սենյակը հավաքվածության տեսանկյունից:
- Ի՞նչ պետք է անել, որպեսզի ձեր շրջապատը մաքուր լինի:



Փոքրիկ դույլով ջուր եմ բերում,
Ու մայրիկիցս օճառ խնդրում,
Թաշկինակս առած այսպես,
Լվանում եմ մայրիկիս պես։

• Իսկ ի՞նչ եք լվանում ինքներդ։

• Աջ և ձախ կողմերի բառերից ստացե՛ք ճիշտ արտահայտություններ։ Բացատրե՛ք դրանց իմաստը։

Գլուխդ պաղ պահե…	ոսկուց
Անբանը հաց ուտելիս առողջ է…	իմացիր կորավ գնաց
Գործը վաղվան մսաց…	երջանիկ լինել
Առողջությունը թանկ է…	ոտներդ տաք
Առանց առողջության անհնար է…	աշխատելիս հիվանդ

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Չի սիրում ոչ կեղտ
Եվ ոչ էլ փոշի,
Մաքրում է հատակ,
Հագուստ ու կոշիկ։

ՀՈՂԱՇՏՊ

Մի բան գիտեմ զարմանալի,
Նա մագիլներ ունի հավի,
Մութ անտառն է իրար տալիս,
Հարթում սիրուն ու ետ գալիս։

ՅՈՂՈՎ

Թեև կարգ-կանոն շատ է սիրում նա,
Բայց զբոսնում է սեղանի վրա,
Սաստիկ տաքացած գնում է գալիս,
Մեր զգեստներին սիրուն տեսք տալիս։

ԻՍԱՅՈՊ

Ո՛չ թուխպ է, ո՛չ ամպ,
Բայց քո ցանկությամբ,
Քո ուզած տեղում
Անձրև է մաղում։

ՆԱՍՓՂՓ

Հիգիենա բառը ունի հունական ծագում։ Թարգմանաբար նշանակում է «առողջ»։

8 ԱՆՁՆԱԿԱՆ ՀԻԳԻԵՆԱ

- Դուք լվացվո՞ւմ եք ամեն առավոտ:
- Էլ ե՞րբ եք լվացվում:
- Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ է պետք լվացվել:

Հիգիենայի կանոնների ամբողջությունը կոչվում է **անձնական հիգիենա**: Դրանց կատարումը նպաստում է մարդու առողջության պահպանմանն ու ամրապնդմանը:

Անձնական հիգիենան նշանակում է.

- ✓ լվացվել -առավոտյան և երեկոյան,
- ✓ մաքրել ատամները- օրը երկու անգամ,
- ✓ լոգանք ընդունել,
- ✓ կտրել ոտքի և ձեռքի եղունգները,
- ✓ օճառով լվանալ ձեռքերը ուտելուց առաջ, փողոցից տուն գալուց, կենդանիներին շոյելուց հետո,
- ✓ հետևել հագուստի մաքրությանը,
- ✓ լվանալ մրգերն ու բանջարեղենը ուտելուց առաջ,
- ✓ լվանալ սպասքը անմիջապես ուտելուց հետո,
- ✓ օդափոխել սենյակը,
- ✓ լիարժեք քնել:



Հիշե՛ք

Անձնական հիգիենային հետևելն առողջության երաշխիքն է:

Դիտե՛ք «Փնթի Սեթը» տեսանյութը և քննարկե՛ք:

- Կարդացե՛ք բանաստեղծությունը: Քննարկե՛ք այն:

Խոզը մտավ մի պարզ լիճ,
Մաքրեց մի լավ դունչ ու պինչ,
Հետո ելավ ու ասավ.
- Ա՛խ, ինչ կեղտոտ ջուր է սա:

Գ. Գաբրիելյան

- Նկարների հիման վրա կազմե՛ք խորհուրդներ:
- Ընկերներով քննարկեք ձեր կազմած խորհուրդները:
- Մեկնաբանե՛ք այդ խորհուրդների իմաստը:

ՀԱՐՑԵՐ

- Կարդացե՛ք տեքստերը, բաց թողած տեղերում ավելացրե՛ք հետևյալ բառերը՝
ատամների, ջուրն ու օճառն, եղունգների, լվանալը

✓ *Մաշկը մաքրելու հիմնական միջոցները ... են:*

✓ *Բերանի խոռոչի խնամքը նպաստում է ... պահպանմանը:*

✓ *... ճիշտ խնամքը և ձեռքերի լավ ... կանխում են բազմաթիվ հիվանդություններ:*

ՀԱՐՑԵՐ

- Ինչու՞ ենք մենք գիշերը քնում:

ՊԱՏՄԵԼ

- Նկարների օգնությամբ պատմե՛ք,
թե ինչ է կարելի և ինչ չի կարելի անել քնելուց առաջ:

Կան այնպիսի մասնագիտությունների տեր մարդիկ, ովքեր գիշերը չեն քնում: Նրանք են հրշեջները, բժիշկները, ոստիկանները, հացթուխները:

Ի՞նչ եք կարծում, ինչու՞:

ԴԻՏՈՒՄՆԵՐ

- Դիտե՛ք «Ինչպե՞ս ճիշտ մաքրել ատամները» տեսաֆիլմը

- Ատամները մաքրելիս հետևե՛ք տեսաֆիլմում ցուցադրվող օրինակին:

- Դիտե՛ք «Ինչպե՞ս ճիշտ լվանամ ձեռքերս» տեսաֆիլմը: Համեմատե՛ք ձեռքերը լվանալու ձեր սովորության հետ: Որքանո՞վ է համընկնում:

Ատամները պետք է լվանալ ամեն օր՝ առավոտյան և երեկոյան,

Ատամները պետք է լվանալ 3 րոպեից ոչ պակաս,

Ատամի խոզանակը անհրաժեշտ է փոխարինել նորով 2 ամիսը մեկ անգամ:

- Ի՞նչ խաղեր եք սիրում խաղալ բակում:



ԱՌԱՁԱԴՐԱՆՔ

- Շարունակե՛ք միտքը.

- ✓ *Պետք է լվացվել օրական 2 անգամ ... և ... :*
- ✓ *Ձեռքերը պետք է լվանալ ..., ..., ... հետո :*
- ✓ *Քնելուց առաջ պետք է ... ննջասենյակը :*
- ✓ *Սպիտակեղենը պետք է հաճախ ... :*
- ✓ *Ուտելու ժամանակ չի կարելի ... :*
- ✓ *Մրգերը և բանջարեղենը ուտելուց առաջ անպայման պետք է ... :*
- ✓ *Ատամները պետք է մաքրել օրական 2 անգամ ... և ... :*
- ✓ *Հագուստը կախել ... :*

ՏՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

- Կազմե՛ք 2-3 հանելուկ անձնական հիգիենայի վերաբերյալ:
- Պատրաստի՛ր պատմություն քո օրվա հիգիենայի վերաբերյալ:
- Դասարանում քննարկե՛ք յուրաքանչյուրիդ պատմությունը: Ինչո՞վ էին նման և ինչո՞վ տարբեր ձեր պատմությունները:

ՀՐԱՉԻԿԻ ՓՈՐԱՑԱՎԸ

Մայրը մի օր Հրաչին
Գործի դրեց ... չգնաց,
Ասաց. «Փորս ցավու՛մ է»
Տանը պառկեց ու մռաց:

Ընկերները կանչեցին,
- Հրա՛չ, գնանք լողալու՛...
Տղան նայեց ... Մայրը թե.
-Չես էլ գնա խաղալու:

-Թո՛ղ, մայրի՛կ ջան, ամո՛թ է,
Նրանք կանգնած նայու՛մ են ...
-Չի՛ կարելի ջուր մտնել,
Չէ՞ որ փորդ ցավում է:

-Փո՞րս ...- մի պահ շփոթվեց,
Բայց ելք գտավ մեր տղան,-
Մի՛ մտածիր, մայրի՛կ ջան,
Մեջքիս վրա կլողամ:

Գ. Գաբրիելյան



ԹԵՄԱ 2 ԵՍ ԱՊԱՀՈՎ ԵՄ

1 ԱՌՈՂՋ ԵՎ ՍՆՆԴԱՐԱՐ ՈՒՏԵԼԻՔ

Մարդն ամեն օր պետք է սնվի, որովհետև նրա օրգանիզմին անհրաժեշտ են սննդանյութեր: Դրանք անհրաժեշտ են, որ մենք կարողանանք ապրել, սովորել և աշխատել: Օգտակար սննդից և ջրից են կախված մարդու մարմնի աճը, զարգացումն ու առողջությունը:

Առանց սննդի մարդը կարող է ապրել մի քանի շաբաթ, իսկ առանց ջրի՝ մի քանի օր:

Մարդուն առանձնապես հարկավոր են վիտամիններ, որոնք մեծ մասամբ պարունակում են մրգերը և բանջարեղենը:

Գիտե՞ք, որ

«Վիտամին» բառը նշանակում է՝ «Կյանք տվող»:

Ինչու՞ է օրգանիզմին անհրաժեշտ սնվել:

- Աճի և զարգացման համար
- Ակտիվության և դիմացկունության համար
- Լավ ինքնազգացողության համար
- Հիվանդությունների դեմ պայքարելու համար

Սուրենը, Վարդանը և Նարեն առաջադրանք են ստացել արկղերից առանձնացնել բանջարեղեններ:

Նրանցից ո՞վ է ճիշտ կատարել հանձնարարությունը:

Կատարե՛լ նույնպիսի առաջադրանք մրգերի ընտրությամբ:

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Երկարավուն, ձվաձև,
Փայլուն, ինչպես ձվածեղ:

ՊՂՊՈ

Իրեն մենակ թաղեցինք,
Ճտերի հետ հանեցինք:

ՅԿՔՍՏՅՈԿ

Կլորիկ է գնդի պես,
Ջոլավոր է զեբրի պես,
Երբ լավ հասած է լինում,
Անուշ համ է ունենում:

Ն.Մկրտումյան

ԿԻՍԺՂՈԸ

Թե օր լինի սովորական,
Ծնունդ լինի, օր տոնական,
Բազմած է միշտ սեղաններին
Կարմիր խ . . . . . հաղթական

Ս. Մուրադյան

ՆՍՆՈՊ

Սա մեղրաճոր
Աշնան տ . . . է,
Մառաններում
Կախված գանձ է:

Ս. Մուրադյան

ԲՂՈՏ

Գետնատարած գնդլիկը՝
Հաստագլուխ ցմփորիկը,
Մե՛ղր Մոխրոտի կառքն է դառնում,
Մե՛ղր մարդկային կերպար առնում:

ՌԻՍՆ

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Խաչբառում տեղադրե՛ք հանելուկների պատասխանները.

1			2							
		3					6			
	4									
			5							

ԴԵՂՁԸ

Դե՛ղձ, ինչու՞ ես,
Ախր այդպես,
Դուրսդ՝ փափուկ,
Համդ՝ քաղցր,
Իսկ կորիզդ
Դառն ու կարծր:
-Միթե՞ վատ է,
Ա՛յ Վարդերես,
Որ ես անվերջ՝
Քաղցրությունը
Ջեզ եմ տալիս,
Դառնությունը՝
Պահում իմ մեջ:

Գ. Գաբրիելյան

• Համապատասխանեցրե՛ք աջ և ձախ կողմի բառերը, ստացե՛ք ճիշտ իմաստ: Բացատրե՛ք դրանց իմաստը:

Ալյուրը մենք մաղեցինք, ...	նա կուտի:
Հաց ու պանիր, ...	բերանը տանձ չի ընկնի:
Ով աշխատի, ...	կեր ու պարիր:
Ծառի տակ պառկողի...	փախլավան ուրիշները կերան:

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

• Այս հղումով դիտե՛ք «Չիպոլինոյի արկածները» տեսաֆիլմը:

• Դու՛րս գրեք դրանում հնչող բանջարեղենի ու մրգերի անունները: Ընկերներով քննարկե՛ք արդյունքները:

ՀՈՐԻՆՈՒԿ - ՀԱՆԵԼՈՒԿ

• Հորինե՛ք 2-3 հանելուկ մրգերի ու բանջարեղենի անուններով:

• Կազմե՛ք մրգերի և բանջարեղենի անուններից կազմված խաչբառ:

2 ԻՆՉՊԵ՞Ս ՃԻՇՏ ՍՆՎԵԼ

ՀԱՐՑԵՐ

- Մեկ բառով ինչպե՞ս կանվանեք նկարում պատկերված ամբողջությունը:

Պետք է ձգտել շատ ուտել բուսական և կենդանական ծագման բազմազան սնունդ, որպեսզի մեր օրգանիզմը ստանա իրեն անհրաժեշտ սննդարար նյութերը:

Բուլկեղեն և քաղցրեղեն պետք է քիչ ուտել. դրանցից կարելի է չաղանալ: Իսկ, ահա, թարմ մրգեր ու բանջարեղեն պետք է շատ ուտել: Չէ՞ որ դրանք վիտամինների իսկական պահեստարան են: Դրանք մեզ տալիս են էներգիա և օգնում են մեր օրգանիզմին արագ աճել ու ամրացնել մեր ոսկորները:

Չպետք է շատ ուտել տապակած, ապխտած, աղի և կծու սնունդ: Դրանք միգուցե համով են, բայց ոչ շատ օգտակար և նույնիսկ վնասակար են:

Սնունդը և խմիչքը չպետք է շատ տաք ընդունել: Շատ սառը սննդից և խմիչքից ևս պետք է զգույշ լինել, որ չհիվանդանալ:

Պետք է ձգտել սնվել միշտ նույն ժամին:

• Տրված քարտերից առանձնացրու՛ բուսական և կենդանական ծագման սննդամթերքը:

ԴԻՏՈՒՄՆԵՐ

1. Նայե՛ք նկարները: Ընկերներով որոշե՛ք, թե ինչպես պետք է ճիշտ նախաճաշել:
2. Հորինե՛ք պատմություն նկարներից յուրաքանչյուրի վերաբերյալ:
3. Ո՞վ է ճիշտ նախաճաշում:

ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ հյութեր ես սիրում խմել:
2. Օրական քանի՞ բաժակ ջուր ես խմում:

ՀԵՏԵՎԵ՛Ք ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻՆ

1. Նախաճաշե՛ք ամեն օր:
2. Քիչ կերե՛ք քաղցրեղեն:
3. Ավելի շատ կերե՛ք մրգեր, բանջարեղեն, կաթնամթերք:
4. Ընթրիքին աշխատե՛ք շատ չուտել:

- Նկարներից ընթրիքի համար ընտրե՛ք ուտեստը:

ՀԱՐՑԵՐ

1. Ինչպե՞ս է կոչվում սննդի ընդունումն առավոտյան:
2. Ինչպե՞ս է կոչվում սննդի ընդունումը ցերեկը:
3. Ինչպե՞ս է կոչվում սննդի ընդունումը երեկոյան:

ՀԵՏԵՎԵ՛Ք ԿԱՆՈՆՆԵՐԻՆ

1. Ուտելուց առաջ լվացե՛ք ձեռքերը:
2. Կերե՛ք անշտապ, սնունդը երկար ծամելով:
3. Սնունդը ընդհանուր ափսեից ձեռքով կամ ձեր պատառաքաղով մի վերցրե՛ք:
4. Ուտելու ժամանակ և ուտելուց հետո օգտագործե՛ք անձեռոցիկ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

- Ընկերներով քննարկե՛ք և պարզե՛ք, թե ինչ են մտնում *հացեղեն-ձավարեղեն, ձու-մսեղեն-լոբազգի, կաթնեղեն, յուղեր* սննդամթերքի խմբերում:

Լավաշը իսկական հայկական հաց է, այն թխում էին միմիայն հայ կանայք: Լավաշը թխում են թրծված, հողի մեջ թաղված հատուկ կավե գլանաձև փոսում, որը կոչվում է **թոնիր**:

ՄԵՐ ԼԱԿԱԾ ՀԱՑԸ

Մեր լավաշ հացը մեր պարզությունն է,
Որ բաց ենք անում ամենքի առաջ,
Մեր լավաշ հացը մեր պատմությունն է,
Կրակի բոցում թրծված ու հառնած:

Ա. Պարսամյան

1. Ընկերներով քննարկե՛ք երեխաների վարքագիծը սեղանի շուրջ:
2. Նրանց համար կազմե՛ք պահվածքի կանոններ սեղանի շուրջ:

Օրինակ՝ ուտելու ժամանակ չի կարելի կարդալ:

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Աման ունեմ մի պուճուր,
Մեջը երկու գույնի ջուր:

ՀՍԾ

Լիքը գալիս է, դատարկ՝ հետ գնում,
Ով ձեռքն է առնում՝ նրան է սնում,
Ի՞նչ իր է՝ գիտե՞ս, եթե մտածես՝
Ճիշտ պատասխանը իսկույն կգտնես:

ՀՈՆԻ

3 ՎՏԱՆԳՆԵՐԸ ՄԵՐ ՇՈՒՐՋԸ

• Համամի՞տ եք, որ ասում են, թե մարդը զգուշավոր է, ապա վախկոտ է, ամեն ինչից վախենում է:

Ոմանք կարծում են՝ եթե մարդը զգուշավոր է, ապա նա վախկոտ է: Բայց դա այդպես չէ: Զգուշավորությունը՝ խոհեմություն է: Միշտ պետք է պատկերացնել, թե ինչ կարող է տեղի ունենալ, ինչպիսի հետևանքներ կլինեն, եթե այդպես վարվենք:

Մեր կյանքում շատ անախորժություններ տեղի են ունենում հենց մեր անզգուշության պատճառով:

Հրդեհները, վթարները, ճաաավածքները դրա հետևանքն են:

ՀԱՐՑԵՐ

• Դիտե՛ք նկարը: Ինչպիսի՞ վտանգներ են պատկերված: Ինչպե՞ս կարելի է խուսափել վտանգներից:

• Դիտե՛ք նկարները: Վտանգավոր ի՞նչ են արել երեխաները: Ի՞նչ կարող է պատահել յուրաքանչյուրի դեպքում: Ինչպե՞ս նրանք պետք է վարվեին:

ՀԱՐՑԵՐ

• Հիշե՛ք՝ ինչ իրեր կան ձեր տանը, որոնք կարող են վտանգավոր լինել ձեզ համար:

• Մտածե՛ք անվտանգության կանոններ դրանց վերաբերյալ, օրինակ՝ չի կարելի խաղալ դանակով:

• Սովորե՛ք ճիշտ ընտրել խաղալու և զբոսնելու համար անվտանգ վայրեր:

ՀԻՇԵ՛Ք

• Ջրային ավազաններում վտանգներից խուսափելու համար

✓ լողացե՛ք միայն մեծերի ներկայությամբ,
✓ մի՛ լողացեք և սուզվե՛ք անծանոթ վայրերում,
✓ լողացե՛ք միայն մաքուր ջրավազաններում: Աղտոտված ջրավազանների ջուրը վտանգավոր է առողջության համար.
✓ լողալու ժամանակ մի՛ հրմշտեք իրար, մի՛ քաշեք միմյանց ոտքերից, ձեռքերից, մի՛ լողացեք ափից հեռու,
✓ ընկերներով մտածե՛ք անվտանգության այլ կանոններ ևս:

• Անվտանգության կանոններին պետք է հետևել նաև բնության գրկում զբոսնելու, հանգստանալու ժամանակ: Ահա այդ կանոններից մի քանիսը՝

✓ Մի՛ կերեք անծանոթ պտուղներ, հատապտուղներ, սնկեր: Դրանք հաճախ գեղեցիկ են, ունենում են վառ գունավորում, բայց վտանգավոր են առողջության համար, թունավոր են:
✓ Հեռու մնացեք խայթող միջատներից, նրանց բներից: Մի՛ քանդեք նրանց բները:
✓ Հեռու՛ մնացեք օձերից, կարիճներից: Մի՛ փորձեք ոչնչացնել նրանց:

ԱՆԱԽՈՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԽՈՒՍԱՓԵԼՈՒ ՀԱՄԱՐ

- ✔ Տնից դուրս գալուց առաջ ստուգե՛ք՝ միացած չե՞ն մնացել ջուրը, գազը, արդուկը, հեռուստացույցը և մյուս էլեկտրասարքերը,
- ✔ Մ՛ի մագլցեք ծառերը, ցանկապատները, մի՛ բարձրացեք տանիքները, եթե ձեզ հետ չկան մեծեր,
- ✔ Մ՛ի խաղացեք լուցկիով, կրակայրիչով: Զգու՛շ եղեք կրակի հետ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հիշե՛ք այս համարները և անհրաժեշտության դեպքում զանգահարե՛ք.

ՀՐԴԵՀ

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ



ԳԱԶԻ ԱՐՏԱՀՈՍՔ

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Ամեն ինչ լափող Ահավոր մի դև, Ինքը կաս-կարմիր, Իսկ թևերը սև: **ՀՂԵՎՀ**	Շոր է կարում Ողջ աշխարհին, Բայց շոր չունի Ինքն իր հագին: **ՆԳՈՐ**	Ինձ օգնում են Հովն ու քամին, Ջուրն է միայն Իմ թշնամին: **ԻՈՒԼԻ**

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Օգտագործելով լրացուցիչ գրականություն, համացանցի նյութեր՝ պատրաստե՛ք պատմություններ այն բույսերի, սնկերի, կենդանիների մասին, որոնք կարող են վտանգավոր լինել մարդկանց համար:

Աշխատանքը կարող եք կատարել նաև գույգերով կամ խմբերով: Դասարանում քննարկե՛ք աշխատանքների արդյունքները:

4 ՋԳՈՒՇԱՑԵ՛Ք ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻՑ

Փողոցում կա երթևեկելի մաս և մայթ: Մայթը նախատեսված է հետիոտների համար: Երթևեկելի մասով անցնում է տրանսպորտը. այն փողոցում ամենից վտանգավոր մասն է:

Կան փողոցներ, որտեղ կանոնները կարգավորում է լուսացույցը:

ՀԱՐՑԵՐ

- Որտե՞ղ է գտնվում հետիոտնը:

Որտեղո՞վ են երթևեկում մեքենաները:

Վառվում է կարմիր լույսը՝ կանգնի՛ր:

Վառվում է դեղին լույսը՝ ուշադիր եղիր:

Վառվում է կանաչ լույսը՝ անցիր:

• Ճանապարհը կարելի է անցնել միայն -ով, լուսացույցի լույսը վառվելուց հետո: լույսն արգելում է անցնել ճանապարհը:

• Ճանապարհային նշանների իմացությունը օգնում են ձեզ կողմնորոշվել փողոցում և խուսափել վտանգներից:

Ճանապարհային նշանները մարդկանց տեղեկացնում են՝ ինչ կարելի է անել և ինչ չի կարելի անել փողոցում:

ԱՐԳԵԼՈՂ ՆՇԱՆՆԵՐ	ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՆՇԱՆՆԵՐ	ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆՈՂ ՆՇԱՆՆԵՐ	ՏԵՂԵԿԱՑՆՈՂ ՆՇԱՆՆԵՐ
մեքենաների շարժը	հետիոտնի շարժը	առջևում երկաթգիծ է	որտեղ անցնել ճանապարհը
հետիոտնի անցումը	միայն հեծանվորդներին	մոտակայքում երեխաներ են	ավտոբուսի կանգառ

ՀԱՐՑԵՐ

• Խաղացե՛ք խաղ՝ ով ավելի շատ ճանապարհային նշաններ կանվանի:

• Ի՞նչ են նշանակում ճանապարհային երթևեկության այս նշանները:

• Նայելով նկարին՝ պատմե՛ք՝ որտեղով հետիոտները կարող են անցնել փողոցը, որտեղով՝ ոչ: Ինչու:

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Ոչ լսում է, ոչ խոսում,
Ոչ զգում է, ոչ տեսնում,
Սակայն նա մեզ բոլորիս
Ճանապարհ է ցույց տալիս:

ՓԵՒՍՈՒՈՒՏ

Ի՞նչն է վազում անդադար,
Հենց որ կանգնեց կընկնի վայր:

ԽՎՈՂՈՉ

ՏՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

• Նկարագրե՛ք ձեր ճանապարհը տանից մինչև դպրոց:
• Ուշադրություն դարձրե՛ք ինչպիսի նշաններ են հանդիպում ձեր ճանապարհին:
• Ճանապարհային ինչպիսի՞ նշաններ կան ձեր դպրոցի մոտակայքում:

5 ԻՆՉՊԵ՞Ս ՊԱՇՏՊԱՆՎԵԼ ԵՐԿՐԱՇԱՐԺԻՑ

- Ի՞նչ գիտեք երկրաշարժերի մասին:

Երկրաշարժը անկանխատեսելի բնական աղետներից է: Այն ոչնչացնում է մարդկանց ու շրջակա միջավայրը: Չնայած երկրաշարժի գործողության անորոշությանը՝ հնարավոր է պաշտպանվել երկրաշարժի ժամանակ: Դրա համար անհրաժեշտ է երկրաշարժին միշտ պատրաստ լինել տանը, դպրոցում, փողոցում:

ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՈՐՈՆՈՒՄ

- Դիտե՛ք «Ի՞նչ անել երկրաշարժի ժամանակ» տեսաֆիլմը: Ի՞նչ նոր բան իմացաք:

- Ահա մի քանի կանոններ, թե ինչ է կարելի և ինչ չի կարելի անել երկրաշարժի ժամանակ

1) Եթե հնարավոր է, դուրս եկե՛ք շենքից: Համոզվե՛ք, որ դուք բոլոր կառույցներից գտնվում եք անվտանգ հեռավորության վրա:
2) Եթե անհնար է դուրս գալ բաց տարածություն, թաքնվե՛ք անվտանգ վայրում (հիմնական ներքին պատերի դռների բացվածքներում), մահճակալի կամ սեղանի տակ:
3) Մի՛ կանգնեք ապակե դռների և ապակիների մոտ:
4) Մի՛ կանգնեք շարժվող առարկաների կողքին:
5) Դուրս մի՛ եկեք տանիքներ կամ պատշգամբներ:
6) Դպրոցում թաքնվե՛ք նստարանների տակ և ձեռքերով ծածկե՛ք գլուխը:
7) Խուսափե՛ք աստիճաններից, մի՛ օգտվեք վերելակից:
8) Խոհանոցում անջատե՛ք գազը:
9) Պահպանե՛ք հանգստություն, խուճապի մի՛ մատնվեք, մի՛ ճչացեք:
10) Հեռու՛ մնացեք փողոցի լապտերներից, մետաղալարերից և շենքերից:
11) Մի՛ կանգնեք ծառերի տակ:
12) Մի՛ մտեք ստորգետնյա անցումներ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

- Ուսուցիչներից պարզե՛ք, թե որոնք են ձեր դասարանի հիմնական պատերը, ներքին կրող այուները:
- Ծնողներից պարզե՛ք ձեր տան հիմնական պատերը, ներսի կրող պատերը:

6 ՎՆԱՍԱԿԱՐ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մարդը ժամանակի և գործունեության բերումով կարող է ձեռք բերել հակումներ, կարիքներ և սովորություններ, որոնք կարող են վնասել նրա առողջությունը: Այդ ամենը դանդաղ կերպով քայքայում է մարդու առողջությունը և հանգեցնում հիվանդությունների զարգացման:

Մարդու պարբերական հակումների և կարիքների ամբողջությունը, որոնք վնասում են նրա առողջությունը կոչվում են **վնասակար սովորություններ**:

Առողջ լինելու համար անհրաժեշտ է խուսափել վնասակար սովորություններից:

ՀԱՐՑԵՐ

- Ի՞նչ վատ սովորություններ ունեք դուք:
- Ընկերներով քննարկե՛ք ձեր վնասակար սովորությունները:
- Ընտրե՛ք նյութեր և պատրաստե՛ք ցուցապաստառ՝ «Վատ սովորություններ» վերնագրով:

- Վատ սովորություններ են համարվում

- ✓ փնթիությունը, ուտելուց առաջ չլվացվելը,
- ✓ ոչ լիարժեք սնվելը, չնախաճաշելը,
- ✓ առավոտյան և երեկոյան ատամները չլվանալը և չլվացվելը,
- ✓ քիչ շարժվելը, չզբոսնելը, առավոտյան և երեկոյան մարզանքներ չանելը,
- ✓ օրվա անկանոն ռեժիմը, քնի պակասը
- ✓ ծխելը,
- ✓ մաստակ ծամելը,
- ✓ եղունգները կրծելը,
- ✓ համակարգչից և հեռախոսից կախվածությունը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

- Թվարկե՛ք վատ սովորությունների շարքը:
- Ինչպե՞ս կարելի է հաղթահարել վատ սովորությունները:

Ծխելը կարող է հանգեցնել բազմաթիվ խնդիրների: Ծխախոտի մեջ կան առողջության համար վտանգավոր շատ նյութեր: Ծխախոտի ծուխը ազդում է ոչ միայն թոքերի, այլև ամբողջ մարմնի վրա ու բերում

- Տեսողության թուլացման,
- Անառողջ ատամների,
- Համի թուլացման,
- Հոտառության թուլացման,
- Մշտական հազի,
- Սրտի հիվանդությունների,
- Ախորժակի կորստի,
- Վատ որակի մազերի:



4 օր անընդմեջ չքնելու հետևանքով մարդը կարող է մահանալ: Կարևոր է, որ մարդը պահպանի քնի 8-ժամյա տևողությունը:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

- Թվե՛ք և տետրում գրե՛ք լավ սովորությունները (կարելի է նաև պաստառի տեսքով), օրինակ՝ առողջ սնվելու սովորությունը:
- Ինչո՞ւ են դրանք համարվում լավ սովորություններ:
- Դասարանում ձեր գրածը համեմատե՛ք ընկերների գրածների հետ:
- Քննարկե՛ք:

7 ԻՆՉՊԵ՞Ս ԽՈՒՍԱՓԵԼ ՀԻՎԱՆԴԱՆԱԼՈՒՑ

- Ի՞նչ հիվանդություններ գիտես:
- Երբևէ հիվանդացե՞լ ես հարբուխով:
- Ինչպիսի՞ն էր ինքնազգացողությունդ հիվանդ ժամանակ:
- Ինչպե՞ս քեզ բուժեցին:

Առողջ մեծանալու համար պետք է ինչ որ բաներ իմանաք հիվանդությունների մասին և այն մասին, թե ինչպես անել, որ չհիվանդանաք:

Չհիվանդանալու համար հարկավոր է նախ կոփվել: Դրա համար պետք է ամեն օր զբաղվել մարմնամարզությամբ, զբաղվել սպորտով: Կոփվելու լավագույն միջոցներն են Արևը, օդը և ջուրը: Դրանք մեզ տալիս է բնությունը:

Բացի այդ, փողոց դուրս գալիս պետք հագնել եղանակին համապատասխան հագուստ:

Շատ հիվանդություններ ունեն վարակիչ բնույթ: Վարակիչ հիվանդությունները հիվանդությունների ամենատարածված տեսակն են:

Վարակիչ հիվանդություններից կարելի է խուսափել պատվաստումներ կատարելով:

Վարակիչ հիվանդություններից են հարբուխը, գրիպը, անգինան, քովիդը:

- Եթե տանը հիվանդ կա, անհրաժեշտ է՝
  - ✓ սենյակը հաճախակի օդափոխել,
  - ✓ առանձնացնել հիվանդի սպասքը,
  - ✓ կրել դիմակ

ՀԱՐՑԵՐ

• Դիտե՛ք նկարները: Երեխաներից ո՞վ կարող է հիվանդանալ: Ինչու՞ եք այդպես մտածում:

ՀԱՐՑԵՐ

• Ինչու՞ են ասում, որ հազալիս կամ փռշտալիս հարկավոր է բերանն ու քիթը ծածկել:

ՀԵՏԵՎԵ՛Ք ԲԺԻՇԿՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻՆ

Հաճա՛խ օդափոխեք սենյակը:
Հաճա՛խ եղեք մաքուր օդում:
Առո՛ղջ սնվեք, նախաճաշե՛ք:
Պահպանե՛ք օրվա ռեժիմը:
Մի՛ շփվեք հիվանդ մարդկանց հետ:
Հաճա՛խ լվացվեք:
Կրե՛ք դիմակ:

• Լրացրե՛ք նախադասությունները՝ օգտագործելով տրված բառերը՝ *ընկերներիս, տրամադրություն, շատ բան անել, ինքնազգացողություն:*

Երբ ես առողջ եմ, ես ունենում եմ լավ .... և լավ .....:
Ես հասցնում եմ .....:
Հաճույքով վազում եմ փողոց խաղալու ..... հետ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

• Ընկերներով պարզե՛ք, թե ինչերը կարող են հիվանդությունների պատճառ դառնալ, օրինակ՝ կեղտոտ ձեռքերը:

8 ՄԵՐ ՇՐՋԱԿԱ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԵՐ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ

Մարդն իր գործունեությամբ ազդում է շրջապատող բնական միջավայրի վրա: Այդ ազդեցությունը կարող է ունենալ լավ և վատ հետևանքներ:

Մեր առողջությունը կախված է շրջակա միջավայրի վիճակից: Ներկայումս շատ հիվանդություններ առաջանում են շրջակա միջավայրի վատթարացումից: Այդպիսի հիվանդություններից են ալերգիաների բազմաթիվ տեսակները, չարորակ նորագոյացությունները և այլն:

1

Ինչպիսի՞ ազդեցություն ունի մարդու վրա աղտոտված շրջապատը:

Ինչպիսի՞ ազդեցություն ունի մարդու վրա աղտոտված օդն ու ջուրը:

2

3

Ինչո՞ւ են մարդու համար վտանգավոր արդյունաբերական ձեռնարկությունների և ավտոճանապարհների մոտ աճեցված մրգերն ու բանջարեղենը:

Բնությանը վնաս կհասցվի՞, եթե անտեղի կոտրենք ծառի մի քանի ճյուղ, քաղենք 3-4 ծաղիկ կամ բռնենք թիթեռներ: Գտե՛ք հիմնավորումներ բերված օրինակների համար:

ԴԻՏՈՒՄՆԵՐ

Դիտե՛ք նկարները:

Ո՞ր երեխաներն են ճիշտ վարվում, որո՞նք՝ սխալ:

ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

• Երեխաները մտածել են բնության բարեկամների մի քանի կանոններ և նկարել են դրանց համապատասխան նշանների տեսքով:

Դասընկերներով գտե՛ք կանոններ այդ նշանների համար:

Օրինակ՝ չենք պոկում ծաղիկներ:

ՀԱՐՑԵՐ

• Բնության բարեկամների ուրիշ ի՞նչ կանոններ կարող եք առաջարկել դուք: Մտածե՛ք և նկարե՛ք նշաններ դրանց վերաբերյալ:

ՏՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

• Նկարե՛ք «Հրաշալի բնություն» նկարը:

Դասարանում անցկացրե՛ք այդ նկարների մրցույթ:

ԹԵՄԱ 3

1

ԵՍ ՄԵՆԱԿ ՉԵՄ
ԵՍ ԵՎ ԻՄ ԸՆՏԱՆԻՔԸ

ՀԱՐՑԵՐ

- Ի՞նչ է ընտանիքը:
- Նկարագրե՛ք ձեր ընտանիքը: Քանի՞ մարդուց է բաղկացած ձեր ընտանիքը:
- Թվե՛ք ընտանիքի անդամներին:

- Ո՞վ եք դուք՝ որպես ընտանիքի անդամ:
- Ո՞վ եք դուք մայրիկի և հայրիկի համար:
- Ո՞վ եք դուք տատիկների և պապիկների համար:

- Կարդացե՛ք և բացատրե՛ք ընտանիքի մասին ասացվածքները.

✓ Զորավոր է այն ազգը, որն ունի զորավոր ընտանիքներ:
✓ Սերը հայրենիքի նկատմամբ սկսվում է ընտանիքից:
✓ Թող մեր տուն մտնողները հիանան մեզնով, այլ ոչ թե մեր ուտեստներով:
✓ Չկա ավելի լավ տեղ, քան ձեր տունը:
✓ Այն տունն է լավը, ուր լավն են նրա բնակիչները:

Ընտանիքը՝ միասին ապրող, միմյանց հարազատ մարդիկ են: Ընտանիքի անդամներին միավորում են սերը և հարգանքը միմյանց նկատմամբ, փոխադարձ հոգատարությունը և օգնությունը, ընտանեկան ավանդույթները:

Որոշ ընտանիքներում ապրում են հարազատների մի քանի սերունդ: Ցանկացած ընտանիքում մեծերն օգնում են փոքրերին, իսկ երեխաները՝ մեծերին:

Ընտանիքում յուրաքանչյուր անդամ ունի իր պարտականությունները:

Ամեն ընտանիք ունի իր ավանդույթները:



- Ձեր ընտանիքում ինչպե՞ս են մեծերն օգնում ձեզ:
- Դուք ինչպե՞ս եք օգնում մեծերին:

2 ԵՍ ԵՎ ԻՄ ԸՆՏԱՆԻՔԸ

ՀԱՐՑԵՐ

- Ո՞ր ընտանիքը կարելի է անվանել համերաշխ:
- Ի՞նչ են միասնաբար անում ընտանիքի բոլոր անդամները:
- Որո՞նք են քո պարտականությունները ընտանիքում:
- Միշտ կատարու՞մ ես քո պարտականությունները:

«Ավանդույթ» հասկացությունը թարգմանաբար նշանակում է «փոխանցում»:

Պարտականություններն այն ամենն են, ինչ անպայման պետք է կատարել:

ՀՈՐԻՆԵԼ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

- Հորինե՛ք պատմություն տանը պահվող հին իրերի մասին: Պատմությունը կարող եք սկսել հետևյալ բառերով «Պահարանում կողք կողքի ապրում էին հին իրերը …»

- Ձեր ծնողներից, տատիկներից ու պապիկներից հետաքրքրվեք, թե ինչ խաղալիքներով էին նրանք խաղում մանուկ հասակում:

- Դիտե՛ք նկարը և որոշե՛ք՝ քանի սերունդ է պատկերված: Համեմատե՛ք ձեր ընտանիքի հետ:
- Ընկերներով որոշե՛ք, թե ո՞ւմ ընտանիքում է ավելի շատ սերունդ ապրում:

ՀԱՐՑԵՐ

- Ի՞նչ է երջանիկ ընտանիքը:
- Ընկերներով մտածե՛ք և ներկայացրե՛ք երջանիկ ընտանիքի մասին պատմություններ:

ԱՅՍՕՐ ՈՒՐԻՇ Է ԿԱՐԳԸ

Այսօր ուրիշ է կարգը,
Ե՛ս եմ մաքրել հատակը:
Վա՛յ, վա՛յ, վա՛յ, ի՞նչ արիք,
Սենյակ ինչո՞ւ ոտք դրիք:
Տեղներումդ քարացե՛ք,
Նորից շարժվել չփորձե՛ք:
Ջուր չխմեք՝ Կկաթի:
Հաց-մաց չուտեք՝ Կթափվի:
Լուսամուտը չբացե՛ք,
Փոշի կգա, իմացե՛ք:
Ոչ ոք ուժեղ չշնչի,
Թե չէ՝ փայլը կկորչի:
Ի՛նչ է, մաքրել հատակը,
Կարծում եք, թե կատա՞կ է…

Ս. Կապուտիկյան

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Պատրաստե՛ք լուսանկարային պատմություն ձեր ընտանիքի մասին: Դրա համար օգտագործե՛ք ձեր ընտանեկան ալբոմի լուսանկարները:

3 ՈՐՏԵՂ Է ԱՊՐՈՒՄ ԸՆՏԱՆԻՔԸ

ՀԱՐՑԵՐ

- Որտե՞ղ ես ապրում՝ գյուղում, թե՞ քաղաքում:
- Ինչպե՞ս է կոչվում ձեր բնակավայրը:
- Ինչո՞ւ է այն այդպես կոչվում:

Ընտանիքը կարող է ապրել գյուղում կամ քաղաքում:

- Նայե՛ք նկարները: Ո՞ր նկարում է պատկերված քաղաքը, իսկ որո՞ւմ՝ գյուղը:
- Ինչու՞ եք այդպես կարծում:

ԴԻՏՈՒՄՆԵՐ

- Նայելով նկարներին բացատրե՛ք՝ ինչով են նման և ինչով են տարբեր քաղաքը և գյուղը:

ՊԱՏՄԵԼ

- Պատմի՛ր քո գյուղի /քաղաքի մասին հետևյալ պլանով.

1. Գյուղի /քաղաքի անունը,
2. Որտե՞ղ է գտնվում,
3. Բնության և պատմամշակութային ի՞նչ տեսարժան վայրեր, հուշարձաններ կան,
4. Գյուղում /քաղաքում հետաքրքրաշարժ ի՞նչ իրադարձություններ են տեղի ունեցել անցյալում և տեղի են ունենում ներկայում,

- Հանգստի ինչպիսի՞ վայրեր կան ձեր բնակավայրերում,
- Որո՞նք են ձեր հարազատ գյուղի կամ քաղաքի գեղեցկությունները,
- Ի՞նչ ծառեր, թփեր և ծաղիկներ են աճում ձեր քաղաքում,
- Ի՞նչ ծառեր, թփեր և ծաղիկներ են աճում ձեր գյուղի մերձակայքում,
- Ի՞նչ թռչուններ կան ձեր բնակավայրում,
- Որտե՞ղ են աշխատում ձեր քաղաքի կամ գյուղի մարդիկ,
- Ինչո՞վ է կարևոր նրանց աշխատանքը,
- Պատմե՛ք դրանց մասին:

ՀԱՐՑԵՐ

- Բացատրե՛ք՝ ինչի՞ համար են այս մեքենաները:

ՄԵՐ ԳՅՈՒՂ ՏԱՆՈՂ ՃԱՄՓԱ

-Ինչու՞ այդպես
Ծուռումուռ ես,
Այդքան նեղված
Ու մի բուռ ես...

-Այո՛, իրոք,
Ես մի բուռ եմ,
Ծնված օրից՝
Ծուռումուռ եմ:

Բայց ուղի՞ղ եմ
Հո քեզ տանում...
Դեպի ձեր գյուղ,
Դեպի ձեր տուն:

Գ. Գաբրիելյան

- Ինչի՞ մասին է այս բանաստեղծությունը:
- Ինչպե՞ս կմեկնաբանեք ճանապարհի պատասխանը:

ԾՆՆԴԱՎԱՅՐ

Կանաչ դաշտեր ու
Զովասուն սարեր,
Սարերին՝ քնած
Մամռապատ քարեր,

Քարերի շուրթից՝
Աղբյուրներ վազող,
Աղբյուրներին թեքված
Ժայռեր երազող,

Իսկ ժայռերից վեր
Արծիվն է ահա,
Հսկում է իմ գյուղի
Անդորրը խաղաղ:

Մ. Ախտյան

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

- Պատրաստե՛ք լուսանկարային պատմություն ձեր գյուղի կամ քաղաքի մասին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ի՞ՆՉ Է ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ 3

ԴԱՍ 1 Ի՞ՆՉ Է ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ 4

ԹԵՄԱ 1

ՈՎ ԵՄ ԵՍ

ԴԱՍ 1 ՈՎ ԵՄ ԵՍ 8
ԴԱՍ 2 ՄԵՐ ՀՈՒՅԶԵՐԸ 12
ԴԱՍ 3 ԱՆՑՅԱԼ, ՆԵՐԿԱ, ԱՊԱԳԱ 18
ԴԱՍ 4 ՔՈ ՕՐՎԱ ՌԵԺԻՄԸ 23
ԴԱՍ 5 ՄԵՐ ՄԱՐՄԻՆԸ 27
ԴԱՍ 6 ԻՆՉՊԵ՞Ս ԵՆՔ ՃԱՆԱՉՈՒՄ ԱՇԽԱՐՀԸ 31
ԴԱՍ 7 ՀԻԳԻԵՆԱ. ՄԱՔՈՒՐ ԿԵՆՑԱՂ 34
ԴԱՍ 8 ԱՆՁՆԱԿԱՆ ՀԻԳԻԵՆԱ 37

ԹԵՄԱ 2

ԵՍ ԱՊԱՀՈՎ ԵՄ

ԴԱՍ 1 ԱՌՈՂՋ ԵՎ ՍՆՆԴԱՐԱՐ ՈՒՏԵԼԻՔ 43
ԴԱՍ 2 ԻՆՉՊԵՍ ՃԻՇՏ ՍՆՎԵԼ 47
ԴԱՍ 3 ՎՏԱՆԳՆԵՐԸ ՄԵՐ ՇՈՒՐՋԸ 52
ԴԱՍ 4 ՁԳՈՒՇԱՑԵՔ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻՑ 56
ԴԱՍ 5 ԻՆՉՊԵՍ ՊԱՇՏՊԱՆՎԵԼ ԵՐԿՐԱՇԱՐԺԻՑ 59
ԴԱՍ 6 ՎՆԱՍԱԿԱՐ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 62
ԴԱՍ 7 ԻՆՉՊԵՍ ԽՈՒՍԱՓԵԼ ՀԻՎԱՆԴԱՆԱԼՈՒՑ 64
ԴԱՍ 8 ՄԵՐ ՇՐՋԱԿԱ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԵՐ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ 66

ԹԵՄԱ 3

ԵՍ ՄԵՆԱԿ ՉԵՄ

ԴԱՍ 1 ԵՍ ԵՎ ԻՄ ԸՆՏԱՆԻՔԸ 71
ԴԱՍ 2 ԵՍ ԵՎ ԻՄ ԸՆՏԱՆԻՔԸ 73
ԴԱՍ 3 ՈՐՏԵՂ Է ԱՊՐՈՒՄ ԸՆՏԱՆԻՔԸ 76

ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ

Հանրակրթական դպրոցի
2-րդ դասարանի դասագիրք Մաս 1.

Հրատարակիչ տնօրեն՝ ՍՈՒՐԵՆ ՉՈՒՆԳՈՒՐՅԱՆ

Նկարիչ ձևավորողներ՝ ԱՐՄԻՆԵ ՇԱՀԻՆՅԱՆ
ՆԱՆՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Համակարգչային ձևավորող՝ ՆԱՆՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Լեզվաբան-խմբագիր Բ.Գ.Դ Փ.Մեյթիխանյան

Չափսը՝ 70x100 1/16: Թուղթը՝ օֆսեթ:
Տպագրությունը՝ օֆսեթ: 5.5 տպ. մամուլ:
Տպաքանակը՝

Երևան, Գևորգ Քոչարի 21, հեռ.՝ (37410) 52-88-00
E-mail: info@astghik.am
www.astghik.am

ISBN 978-9939-74-139-0

«Աստղիկ Գրատուն»
հրատարակչություն